

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին փոխարինողի 2022 թվականի սեպտեմբերի 28-ի N956 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 20ի N67-Ա, N69 - N83 որոշումների վերաբերյալ.

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները՝

1. N69-Ն որոշման նախաբանում հղումը «Նորմատիվ իրավական ատերի մասին» ՀՀ օրենքի դրույթներին թերի է կատարված, բացի այդ որոշման դրույթների հաարակալումը սխալ է կատարված:
- 2.N72-Ա որոշման 2-րդ կետում կատարված հղումը անհրաժեշտ է գրառել որոշման նախաբանում:
- 3.N78-Լ որոշման անբաժանելի մաս համարվող հավելվածների վերևի աջ անկյունում անհրաժեշտ է գրառել նաև փոփոխվող հավելվածի վավերապայմանները:
- 4.N79-Ն որոշման վերնագրում «փոփոխություններ» բառի փոխարեն անհրաժեշտ է գրառել «լրացումներ» բառը:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝

Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ